

Հայտարարատու եմ

բե

հայտարարատու չեմ

որ եկամուտս
հայտարարագրեմ

Ինչին է վերաբերում
300 000 դրամի ջեմը

ԱՅՈՒՆ՝ պետք է ներկայացնել եկամուտների հայտարարագիր,

երթե Դուք ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացի եք և . . .

- 2024 թվականին եղել եք վարձու աշխատող,
- 2024 թվականին քաղիրավական պայմանագրով ստացել եք հարկվող եկամուտ,
- 2024թ. ներկայացրել եք հայտարարագիր, ապա 2025-ին ևս պետք է ներկայացնեք,
- 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ զբաղեցրել եք պետական կամ համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոն,
- 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսացել եք 2023թ.-ի արդյունքներով 1 մլրդ. դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից՝ բաժնետեր, փայատեր կամ անդամ,
- 2024թ.-ի ընթացքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով համարվել եք իրական շահառու,
- 2024թ. ընթացքում ստացել եք 20 մլն. դրամ կամ ավելի փոխառություն,
- Բնակվում եք ՀՀ-ում, բայց աշխատում եք արտերկրում գտնվող ընկերությունում,
- 2024 թվականին աշխատել եք թեկուզ մեկ ամիս,
- Գտնվում եք երեխայի խնամքի արձակուրդում,
- 2024թ. աշխատել եք և 2025 թվականին գտնվում եք արտերկրում (2024 թվականին հանդիսացել եք ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացի),
- Աշխատում և բնակվում եք արտերկրում:

Ո՛՞՞, պետք չէ ներկայացնել եկամուտների հայտարարագիր, երբ . . .

- Չունեք ՀՀ քաղաքացիություն կամ ունեք միայն ՀՀ կացության կարգավիճակ,
- ՀՀ քաղաքացի եք, բայց ՀՀ ռեզիդենտ չեք,
- Անչափահաս եք,
- Բանկային հաշվին ստացել եք փոխանցումներ, այդ թվում՝ արտերկրից և մյուս հիմքերով հայտարարատու չեք,
- 2024 թվականին ստացել եք կրթաթոշակ կամ դրամաշնորհ և մյուս հիմքերով հայտարարատու չեք,
- 2024 թվականին ստացել եք 20 մլն դրամ և ավելի վարկ և մյուս հիմքերով հայտարարատու չեք,
- ԼՂ-ից բռնի տեղահանված անձ եք և ՀՀ քաղաքացի չեք,
- 2024 թվականին անշարժ գույքի վաճառքից կամ վարձակալությունից ստացել եք եկամուտ և մյուս հիմքերով հայտարարատու չեք,
- Միայն կենսաթոշակառու եք և մյուս հիմքերով հայտարարատու չեք,
- Հաշվառված եք որպես անհատ ձեռնարկատեր և մյուս հիմքերով հայտարարատու չեք:

Եկամուտներ, որոնք **ենթակալ են** հայտարարագրման

- Աշխատավարձ,
- Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց ստացված (այդ թվում՝ արտասահմանից) եկամուտներ,
- Անշարժ գույքի վարձակալությունից ստացված եկամուտներ,
- Անշարժ գույքի վաճառքից ստացված եկամուտներ,
- Բանկային ավանդներից, պարտատոմսերից և բաժնետոմսերից ստացված եկամուտներ,
- Շահումները (խաղատների, տոտալիզատորների, վիճակախաղերի շահումները),
- Վարկեր,
- Բոլոր տեսակի նպաստները, ինչպես նաև ալիմենտները,
- Կենսաթոշակներ, հաշմանդամության կամ զինվորական թոշակներ, կրթաթոշակներ և այլն:

Եկամուտներ, որոնք **ԵՆԹԱԿԱ ՉԵՆ** հայտարարագրման

- Սեփական հաշիվների միջև փոխանցված գումարներ,
- Համավարկառուի կողմից վարկի վերաբերյալ տվյալներ,
- Վճարային տերմինալից կամ բանկում Ձեր կողմից Ձեր հաշվին մուտքագրված գումարներ,
- Վերադարձված պարտքի գումար,
- Տարբեր տարիներին կուտակված խնայողություններ,
- Անշարժ ու շարժական գույք,
- ԱԶ-ի եկամուտներ:

Միանվագ ստացված մինչև 300 000 դրամ եկամուտ,

որը ենթակա չէ հայտարարագրման

- Նվիրատվությամբ ստացած գույք կամ դրամական միջոցներ (այդ թվում՝ արտերկրից ուղարկված), եթե միանվագ ստացված գումարը 300 000 դրամից պակաս է,
- Ժառանգությամբ ստացված գույք, եթե միանվագ ստացված գումարը (այսինքն՝ գույքի արժեքը) 300 000 դրամից պակաս է,
- Ստացված փոխառության գումարները, եթե միանվագ ստացված գումարը պակաս է 300 000 դրամից,
- Գույքի օտարումից ստացված չհարկվող եկամուտները, եթե այդ գումարը պակաս է 300 000 դրամից,
- Անհատույց ստացված չհարկվող եկամուտները, եթե միանվագ ստացված գումարը 300 000 դրամից պակաս է:

Ի գիտություն

1. Վերոթվարկյալ բոլոր դեպքերում, եթե մեկ գործարքի շեմը կազմում է 300 000 դրամ կամ ավելի, ապա այդ եկամուտները հայտարարագրվում են:
2. 300 000 դրամի շեմը վերաբերում է մեկ գործարքին, այլ ոչ թե օրվա, ամսվա կամ տարվա ընթացքում կատարված գործարքների հանրագումարին: